Արձանագրություն N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կոմունալ ծառայություն ՀՈԱԿ-ի կարիքների համար ԱՄԱՀ-ԱՊԱՐԱՆԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցումով գնման հայտերի գնահատման նիստի մասին

Ք.Ապարան *«14» Փետրվարի 2019թ.*

ժ 12:00

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝ **Սամսոն Շահինյան – Աշխղեկ-վարպետ**

Հանձնաժողովի անդամներ՝

Սանամ Մեդոյան – Հավաքագրող-գանձապահ

Գարեգին Կոստանյան - Աղբահանության բանվոր

Գնումները համակարգող՝ **Միեր Ամիրյան**

1. **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին**

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է դրական եզրակացություն: Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ մասը, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող: Ինչպես նաև մանակցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 **դեմ** - 0:

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

2.1Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
<Ֆլեշ> ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, **դեմ** - 0:

3. **ԱՄԱՀ-ԱՊԱՐԱՆԿԾ-ԳՀԱՊՁԲ**-19/01 **ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ « ԱՄԱՀ-ԱՊԱՐԱՆԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/01 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած /ընտրված/ մանակից ճանաչել <Ֆլեշ> ՍՊԸ -ին:

3.2 Համաձայն ՞Գնումների մասին՞ ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի անգործության ժամկետ չի սահմանվում:

3.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և չորս աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին տրամադրել պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, **դեմ** - 0:

4. **Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին**

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հաղթող մասնակցի հետ պայմանագիր կնքելու հաջորդ աշխատանքային օրը՝ ժամը 9:30-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	**Սամսոն Շահինյան**
հանձնաժողովի անդամներ՝	_____	**Սանամ Մեդոյան**
	_____	**Գարեգին Կոստանյան**
Գնումները համակարգող՝	_____	**Միեր Ամիրյան**